
ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՏԻԳՐԱՆ ՔՈՉԱՐՅԱՆ

Համաշխարհային պատմության փորձը վկայում է, որ որքան սահմանափակ են երկրի նյութական ու մարդկային պաշարները, տնտեսական ու քաղաքական հնարավորությունները, այնքան դրա ռազմական ու քաղաքական ղեկավարությունը բժախնդրորեն է մոտենում ստեղծված ռազմաքաղաքական իրադրության գնահատմանն ու ճիշտ կանխատեսմանը, հնարավոր փոփոխություններին ու զարգացման հավանական հեռանկարներին, այնքան հրատապ է դառնում երկրի ազգային շահերին ու անվտանգությանը սպառնացող վտանգները ժամանակին բացահայտելու և դրանք չեզոքացնելու արդյունավետ համակարգի մշակումն ու գործադրումը:

Յուրաքանչյուր պետություն իր անվտանգությունն ապահովելու, կենսական շահերը պաշտպանելու համար օգտագործում է տարբեր լծակներ: Դրանց շարքում հատուկ տեղ է զբաղեցնում ռազմական ուժը: Այն քաղաքականության ծայրահեղ, բայց և ամենավճռական գործիքն է: Պատերազմների ու ռազմական բախումների կանխման գործում նախապատվություն տալով քաղաքական-դիվանագիտական, միջազգային-իրավական, տնտեսական և այլ ոչ ռազմական լծակներին, միաժամանակ յուրաքանչյուր պետություն պարտավոր է առկա բոլոր հնարավորություններով ապահովել իր ռազմական անվտանգությունը՝ զինված ուժեր ստեղծելու, նրանց կենսագործունեությունը պատշաճ մակարդակով ապահովելու և մշտապես կատարելագործելու ճանապարհով: Եվ երբ քաղաքական ու այլ խաղաղ միջոցներով անհնար է դառնում պատերազմի կանխումը, ապա պետության անվտանգության ապահովմանը ձեռնամուխ է լինում բանակը (զինված ուժերը)¹:

Նախկին խորհրդային մյուս հանրապետությունների հետ գրեթե միաժամանակ, սակայն առավել անբարենպաստ պայմաններում ձեռնամուխ լինելով ազգային բանակի ստեղծմանը, ՀՀ կարողացավ աներևակայելի կարճ ժամանակահատվածում ստեղծել կարգապահ ու մարտունակ զինված ուժեր, որոնք ներկայումս իրենց մարտական պատրաստության մակարդակով, բարոյահոգեբանական վիճակով առաջիններից են ԱՊՀ-ում, իսկ հարավկովկասյան տարածաշրջանում

¹ Տե՛ս **Останков В. И.** Военная безопасность России в начале XXI столетия. М., 2007, էջ 44-45:

համարվում են ամենամարտունակն ու առաջավորը²: ՀՀ ՁՈՒ առանձին ստորաբաժանումներ, մասնակցելով բազմազգ բազմաթիվ զորավար-ժությունների, ցուցադրել են բարձր մարտական վարպետություն՝ արժանանալով օտարազգի մասնագետների բարձր գնահատականներին ու դրվատանքներին: Այսօր միանշանակ կարելի է ասել, որ անցած տարիներին հաջողվել է ստեղծել մի բանակ, որը մի կողմից համապատասխանում է պետության իրական հնարավորություններին, մյուս կողմից ընդունակ է ապահովելու պետության տարածքային անձեռնմխելիությունն ու անկախությունը:

Ռազմական անվտանգության ապահովման գործում Հայաստանի Հանրապետությունը կարևորում է ազգային և միջազգային երաշխիքների ստեղծումը և ամրապնդումը: Ռազմական անվտանգության ապահովման ազգային երաշխիքը մարտունակ, ժամանակակից սպառազինությամբ, մարտական ու բարոյահոգեբանական բարձր պատրաստվածությամբ, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը պաշտպանելու ունակ, ռազմական անվտանգության սպառնալիքների կանխմանն ու լիակատար չեզոքացմանը պատրաստ, փոխգործակցելի և քաղաքացիական վերահսկման ներքո գտնվող ՀՀ զինված ուժերն են: Ուստի հզոր զինված ուժեր ունենալը ներկայիս աշխարհաքաղաքական իրողության պայմաններում Հայաստանին պարտադրված առաջնահերթություն է, իսկ մարտունակ, ռազմական սպառնալիքների լիակատար չեզոքացմանը և ռազմական անվտանգության ապահովման խնդիրների լուծմանը մշտապես պատրաստ զինված ուժերի առկայությունը պետության գերխնդիրն է³:

Հայաստանի զինված ուժերը ներկայումս քանակական առումով մեծաթիվ չեն, ոչ ոքի չեն սպառնում, մարտունակ են, կարգապահ, կառավարելի: Փորձագիտական վերլուծությունն ու անգամ պարզ համեմատությունը ցույց են տալիս, որ նման գնահատականները բնավ էլ ուռճացված չեն, այլ հաստատում են իրողությունը: Առանց գունազարդելու Հայաստանի զինված ուժերի իրական վիճակը, ընդունելով դրանում առկա բոլոր թերությունները, բացթողումները ու իրավախախտման փաստերը, միաժամանակ պետք է ընդունել նաև, որ այն այսօր հասարակության ամենակենսունակ օրգանիզմներից է: Երկրի պաշտպանության ոլորտի ղեկավարությունը մշտապես ձեռնարկում է կտրուկ, հաճախ ոչ միանշանակ ընկալվող միջոցառումներ՝ եղած բացթողումներն ու իրավախախտումները հնարավորինս նվազագույնի հասցնելու, բանակի մարտունակությունն ավելի բարձրացնելու ուղղությամբ:

² Տե՛ս ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական խոսքը ՀՀ անկախության 20-ամյակի առթիվ ՀՀ զինված ուժերի զորահանդեսի ժամանակ, 21.09.2011 թ. // www.president.am

³ Տե՛ս ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի ուղերձը ՀՀ ՊՆ կողմից ներկայացված «Պաշտպանության ռազմավարական վերանայման 2011-2015 թթ. ծրագրի» վերաբերյալ // www.mil.am

Բանակաշինությունը անվերջ գործընթաց է, քանզի կատարելությունը չունի սահման⁴: Ինքնահանգստացումը, ժամանակից ետ ընկնելը անթույլատրելի են, իսկ Հայաստանի դեպքում կործանարար: Պարզից էլ պարզ է, որ այսօր Հայաստանի Հանրապետության խաղաղության միակ երաշխավորը կայացած ու մարտունակ զինված ուժերն են: Եվ հաստատված խաղաղությունը կշարունակվի այնքան ժամանակ, որքան Հայաստանի զինված ուժերը կշարունակեն մնալ մարտունակ: Պաշտպանության բնագավառի ղեկավարությունը ձեռնարկում է դրան ուղղված համապատասխան բոլոր քայլերն ու միջոցառումները: Հատկապես լուրջ առաջընթաց է նկատվում բանակի մարտական պատրաստության մակարդակի բարձրացման և հայկական ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման, զինված ուժերի կառուցվածքի կատարելագործման ուղղությամբ⁵:

Ընդունելով Հայաստանի ՁՈՒ-ի կայացման և հանրապետության տարածքային անձեռնմխելիությունն ապահովելու այսօրվա կարողության փաստը՝ այնուամենայնիվ պետք է ընդգծել նաև, որ առայժմ հաջողվել է փայլուն ձևով իրականացնել բանակաշինության կարևոր, սակայն ընդամենը առաջին փուլը: Առջևում հաջորդ, առավել բարդ ու կարևոր փուլերն են՝ «21-րդ դարի բանակ» ստեղծելու գործընթացը, որի նպատակն է ունենալ ձևավորված ռազմաքաղաքական պայմաններին, Հայաստանի անվտանգության միջավայրին համապատասխանող, ազգային անվտանգությանն ուղղված առկա ու հնարավոր մարտահրավերներին և սպառնալիքներին դիմագրավելու ընդունակ, հանրապետության ռազմական անվտանգությունը լիովին ապահովող զինված ուժեր:

Միաժամանակ պետք է հստակ գիտակցել, որ բանակը երկրի ռազմական անվտանգության ապահովման համակարգի, թեև ամենակարևոր, սակայն ընդամենը մեկ բաղադրիչն է: Եվ եթե երկրում ստեղծված չէ կամ հստակ չի գործում ռազմական անվտանգության ապահովման համակարգը իր բոլոր բաղադրիչներով, ամբողջ երկրի մասշտաբով ժամանակին և անհրաժեշտ մակարդակով չեն իրականացվում երկրի պաշտպանունակության ամրապնդմանն ուղղված համակարգված ու համալիր միջոցառումներ, ապա տևական ժամանակահատվածում բանակը առաջնակարգ և բարձր մարտունակ վիճակում պահելը, ինչպես նաև միայն բանակի միջոցով ռազմական անվտանգություն ապահովելը դառնում է չափազանց բարդ, հաճախ անլուծելի խնդիր: Անգամ զինված ուժերի հիմնավոր վերակառուցումը միայն պաշտպանության նախարար-

⁴ Տե՛ս **Озеров В. А.** Конституционно-правовые основы военной реформы в Российской Федерации: автореферат дисс. к. ю. н., М., 2001, էջ 11:

⁵ ՀՀ զինված ուժերի զարգացման ու բարեփոխումների արդյունքների մասին հպարտությամբ ընդգծում են ՀՀ պաշտպանական համակարգի ղեկավարները՝ թե՛ ՀՀ նախագահը, թե՛ պաշտպանության նախարարը, թե՛ մյուս բարձրաստիճան պաշտոնատար անձինք իրենց գրեթե բոլոր ելույթներում և ուղերձներում: Օրինակ, տե՛ս նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական ուղերձը ՀՀ զինված ուժերի ստեղծման 20-ամյակի կապակցությամբ, 28.01.2012 թ. // www.president.am

րության ուժերով անհնար է, քանի որ պահանջում է զգալի նյութական միջոցներ, երկրի մասշտաբով իրականացվելիք համակարգային փոփոխություններ:

Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման գործում զինված ուժերի առաջնակարգ դերը պայմանավորված է նաև առկա ռազմական սպառնալիքի ծավալով, բանակի համախմբող դերով ու համազգային բնույթով: Ձինված ուժերը մշտապես պետք է զբաղվեն միայն իրենց խնդիրների կատարմամբ և երբեք ու ոչ մի պայմանով չներքաշվեն քաղաքականության մեջ: Անուր, կարգապահ ու մարտունակ բանակը, հեռու մնալով քաղաքականությունից, միաժամանակ միշտ էլ գտնվելու է երկրի «քաղաքականության կենտրոնում»՝ իր գոյությամբ վստահություն, հպարտություն ու հավատ ներշնչելով ժողովրդին, զգաստացնելով աշխարհաքաղաքական վիճակը և չեզոքացնելով ռազմական անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները: Եվ, իհարկե, միայն արդյունավետորեն օգտագործելով համայն հայության ու Հայաստանում բնակվող բոլոր ազգությունների հսկայական ներուժն ու հնարավորությունները, հնարավոր է ապահովել վերոնշյալ պահանջներն արտահայտող, արդիական և հուսալի զինված ուժեր⁶:

ՀՀ զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: ՀՀ զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո⁷: Փաստորեն, ՀՀ զինված ուժերի հիմնական առաջնահերթություններն են՝ ունենալ մարտական անհրաժեշտ կարողություններ ազգային ռազմական նպատակներն իրականացնելու համար, ապահովել Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությունը, կանխել պատերազմը, պաշտպանել ազգային շահերը, արձագանքել արտակարգ իրավիճակներին և ճգնաժամերին, պատրաստ լինել անհրաժեշտության դեպքում նպաստելու խաղաղության և կայունության ապահովմանն ուղղված միջազգային կազմակերպությունների ջանքերին:

Ռազմական անվտանգությունն ապահովելիս ՀՀ զինված ուժերի հիմնական խնդիրներն են՝ զինադադարի ռեժիմի և շփման գծի երկայնքով բարձր մարտական պատրաստականության պահպանումը, ռազմական սպառնալիքների բացահայտումը և հնարավոր ագրեսիային դիմակայելու նախապատրաստվելը, սպառազինության, մարտական տեխնիկայի և նյութական ռեսուրսների անհրաժեշտ մարտական և զորահավաքային պատրաստականության պահպանումը, օպերատիվ կիրառման և զորահավաքային

⁶ Տե՛ս, օրինակ, **Հ. Ս. Քոթանջյան**, Հայաստանի ռազմական շինարարության ու զինված ուժերի ստեղծման որոշ ուղղություններ // Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, Եր., 2010, էջ 533-543:

⁷ Տե՛ս «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2008/73, 24.12.2008 թ., 11-12-րդ հոդվածներ:

ծավալման պլանների կատարումը, Հայաստանի Հանրապետության ցամաքային և օդային սահմանի պահպանությունը և պաշտպանությունը, պետական նշանակության օբյեկտների պահպանությունը, միջազգային պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարումը, դիվերսիոն-հետախուզական և ահաբեկչական գործողությունների կանխումն ու չեզոքացումը, տարածքային և քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, տեղեկատվական անվտանգության ապահովումը, պաշտպանական համակարգի այլ խնդիրների իրականացումը⁸:

Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նկատմամբ ագրեսիայի դեպքում հիմնական խնդիրն է ՀՀ զինված ուժերի մասնակի կամ լրիվ ծավալմամբ կասեցնել ագրեսիան, համապատասխան մարտական գործողություններ իրականացնելով՝ ջախջախել հակառակորդին և հասնել լիակատար հաղթանակի՝ առաջնորդվելով ռազմական դրության ժամանակ օրենսդրությամբ սահմանված պահանջներով ու չխախտելով պատերազմի վարման միջազգային իրավունքի դրույթները⁹:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային ոլորտներում ընթացող բարեփոխումների պայմաններում անհրաժեշտ է մշակել և իրականացնել համալիր իրավական միջոցառումներ՝ ուղղված զինված ուժերի մարտունակության բարձրացմանն ու արդի մարտահրավերներին դիմակայելու կարողության ապահովմանը: Նշված բարեփոխումների արդյունավետությունը կախված է մի շարք խնդիրների հաջող լուծումից, որոնցում առաջին հերթին կարելի է ընդգծել զինված ուժերի կառուցվածքակադրային համակարգի կատարելագործումը՝ նպատակ ունենալով ապահովել երկրի ռազմական անվտանգությունը երաշխավորող բանակ¹⁰:

Ռազմական ոլորտի բարեփոխումների կարևորագույն մասը բուն զինված ուժերի վերակառուցումն է, որը ներառում է զորքերի և կառավարման մարմինների հետագա կառուցվածքային կատարելագործումը, զինված ուժերի մարտական կարողությունների, ազդարարման և կառավարման համակարգի օպերատիվության և կայունության բարձրացումը, ժամանակակից կատարելագործված զինատեսակներով բանակի սպառազինության համալրումը: Յուրաքանչյուր պետություն իր ռազմական անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ռազ-

⁸ Տե՛ս ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2008.01.07/1, 25.12.2007, դոկտրինի 6-րդ և 7-րդ գլուխները:

⁹ Այդ մասին առանձնակի նշել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը «Ազատ Արցախ» թերթին և ԼՂՀ համրային հեռուստաընկերությանը տրված հարցազրույցի ժամանակ, 02.09.2011 թ. // www.president.am

¹⁰ Տե՛ս **Ռ. Ս. Քոթանջյան**, Պաշտպանական բարեփոխումների ռազմավարություն // Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, Եր., 2010, էջ 719-722:

մական հզորության չափը որոշում է ելնելով երկրին սպառնացող առկա և հնարավոր վտանգի ծավալներից, իր տնտեսական հնարավորություններից, տարածաշրջանային ու միջազգային իրավիճակից, ուժերի տարածաշրջանային հաշվեկշռից, ընդհանուր և տարածաշրջանային անվտանգության համակարգում իր ստանձնած պարտավորություններից: Այս գործոնների հաշվառմամբ են մշակվում զինված ուժերի զարգացման ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, դրանցով են պայմանավորված ռազմական շինարարության շատ հարցեր, այդ թվում նաև ՁՈՒ-ի անձնակազմի թվաքանակի սահմանումը, համալրման կարգի որոշումը:

Պետք է համաձայնել ռուս մասնագետների այն կարծիքին, որ երկրի պաշտպանական բնագավառի օրենսդրական համակարգում անհրաժեշտություն է զինված ուժերի գործունեությունը կանոնակարգող օրենքի առկայությունը, որով կսահմանվեն զինված ուժերի մշակութային, կազմը, օգտագործման կարգը, դրանց առաջադրվող խնդիրները, գործունեության սկզբունքներն ու իրավական հիմունքները¹¹: Հայաստանում նման օրենքով պետք է հստակորեն սահմանել պետական կառուցակարգում զինված ուժերի տեղի և դերի մասին դրույթներ և ամրագրել, որ վերջինս պետության ռազմական կազմավորման հիմնական տարրն է և նախատեսված է ռազմական մեթոդներով պետության տարածքային ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը, ազգային շահերն ապահովելու, ինչպես նաև միջազգային պարտավորություններին համապատասխան մի շարք խնդիրներ լուծելու համար: Ձինված ուժերի վերաբերյալ օրենքում պետք է նշել նաև զինված ուժերի կառուցվածքային համակարգը¹² զինվորական կառավարման կենտրոնական մարմինները, զինված ուժերի կազմում ընդգրկվող միավորումներն ու ստորաբաժանումները, թիկունքային զորամիավորումները և այլն, ինչպես նաև զինված ուժերի գործունեության այնպիսի կարևոր սկզբունքներ, ինչպիսիք են օրինականության պահպանումը, մարդասիրությունը, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները հարգելը, միանձնյա և կենտրոնացված կառավարումը, պետության անկախության ու տարածքային ամբողջականության խախտման, սահմանների անձեռնմխելիության խոչընդոտման անթույլատրելիությունը

¹¹ Стів Кудашкин А. В. Теоретико-правовые основы военной службы в Российской Федерации. М., 2000, էջ 186-187:

¹² ՀՀ պաշտպանության նախարարության ներկայիս համակարգը (կառուցվածքը և կանոնադրությունը) սահմանվում է ՀՀ կառավարության 25.12.2008 թ. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության քննչական ծառայության կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատելու, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ», Հայաստանի Հանրապետության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության քննչական ծառայություն ստեղծելու մասին» թիվ 1554-Ն որոշմամբ (ՀՀ ՊՏ 2009/2, 14.01.2009 թ.):

և այլն: Օրենքում, կարծում եմ, պետք է հստակորեն նախատեսվեն նաև այն դեպքերը, երբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական ու հասարակական կարգի պահպանման նպատակով Հանրապետության Նախագահին իրավասու է օգտագործելու երկրի զինված ուժերը:

Տնտեսական բավարար կարողություններ և անվտանգության նվազ սպառնալիքներ ունեցող երկրները հիմնականում ստեղծում են համալրման կամավորության սկզբունքի վրա հիմնված արհեստավարժ զինված ուժեր (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Ճապոնիա, Սաուդյան Արաբիա, Միացյալ Արաբական Էմիրություններ և այլն): Որոշ երկրներ նախընտրում են համալրման խառը՝ և՛ զորակոչի, և՛ կամավորության սկզբունքը: Իսկ երկրների գերակշիռ մասում բանակի համալրումը իրականացվում է ընդհանուր զինապարտության օրենքի հիման վրա՝ զորակոչի սկզբունքով: Այս դեպքում դարձյալ որոշիչ գործոն են մնում երկրին սպառնացող վտանգի ծավալները և տնտեսական հնարավորությունները: Այսպես, օրինակ, գտնվելով աշխարհաքաղաքական ոչ բարենպաստ միջավայրում, լուրջ հիմնախնդիրներ ունենալով հարեվան երկրների հետ, Իսրայելը երկրի պաշտպանությանը ներգրավում է բոլոր չափահաս քաղաքացիներին՝ սահմանելով պարտադիր զինվորական ծառայության բավական երկար ժամկետներ. սպայական կոչում ունեցող զինապարտների համար՝ 48, տղաների համար՝ 36, աղջիկների համար 21 ամիս, միաժամանակ 175 հազարանոց բանակի համար ծախսելով տարեկան մինչև 7 մլրդ ԱՄՆ դոլար: Մինչդեռ ռազմական սպառնալիքի գրեթե իսպառ բացակայությունը Շվեյցարիային հնարավորություն է տալիս պահելու միայն 3300 կադրային կազմով բանակ, իսկ քաղաքացիների համար սահմանելու 15 շաբաթյա պարտադիր ծառայության ժամկետ¹³:

Իհարկե, յուրաքանչյուր երկիր ընտրում է զինված ուժերի համալրման իր համար նախընտրելի տարբերակը՝ ելնելով կոնկրետ պայմաններից ու առաջնահերթություններից: Սակայն անվիճելի է կամավորության սկզբունքով համալրված արհեստավարժ բանակի առավելությունը: Միայն արհեստավարժ զինծառայողն է ի վիճակի լրիվ արդյունավետությամբ օգտագործելու ժամանակակից մարտական բոլոր ունակությունները: Ամերիկյան փորձագետների համոզմամբ՝ 100 արհեստավարժ զինվորը փոխարինում է 250 նորակոչիկի, իսկ թուրք զինվորական մասնագետների պնդմամբ՝ արհեստավարժ զինվորներով համալրված վաշտը կարող է հաջողությամբ լուծել նորակոչիկներով համալրված գումարտակի մարտական խնդիրները¹⁴:

Այսօր և տեսանելի հեռանկարում պահպանելով զինված ուժերի համալրման ընդհանուր զինապարտության սկզբունքը՝ միևնույն ժա-

¹³ Ст'ю Фатеев К. В. Правовое регулирование обеспечения военной безопасности Российской Федерации. Дисс. д. ю. н. М., 2005, էջ 226:

¹⁴ Ст'ю Кудашкин А. В. Проблемы законности применения Вооруженных Сил Российской Федерации в современных условиях // "Российский военно-правовой сборник". Проблемы укрепления законности в военной организации государства. М., 2010, էջ 31:

մանակ Հայաստանի Հանրապետությունում հնարավորություններ ու միջոցներ են նախատեսվում զինված ուժերի ժամանակակից բարդ մարտական տեխնիկայով զինված, անձնակազմի բարձր ու առանձնահատուկ պատրաստվածություն պահանջող առանձին զորատեսակների անձնակազմի որոշակի մասը համալրելու արհեստավարժ շարքային ու սերժանտական կազմով¹⁵: Այդ խնդիրը այսօր առավել հրատապ է՝ կապված երկրում հանրակրթության ներկայիս վիճակի, երիտասարդության կրթական մակարդակի որոշակի անկման հետ, իհարկե, հաշվի առնելով նաև տարածաշրջանի ռազմաքաղաքական զարգացումները: ՀՀ պաշտպանության նախարարի կարծիքով, «Հայաստանի պաշտպանական հզորությունը պետք է որոշի ոչ թե ՁՈՒ թվաքանակը, այլ ամենից առաջ վերջինիս բարձր մարտունակությունը, տեխնիկական հագեցվածությունը, շարժունակությունը, արդյունավետ կիրառումը և մի շարք այլ կարևոր տարրեր»¹⁶:

Զինված ուժերի վերակառուցման գլխավոր օբյեկտն ու սուբյեկտը զինծառայողներ են՝ որպես բանակի կարևորագույն հենք, ավանդույթների, փորձի, մարտական կարողությունների ու բարոյական ոգու կրող¹⁷: Ուստի անհրաժեշտ է այդ գործընթացում առավել ապահովել նրանց ընտրության, պատրաստման, տեղաբաշխման, հոգևոր ու գաղափարական դաստիարակության, մասնագիտական կատարելագործման, սոցիալական ապահովման այնպիսի համակարգ, որի միջոցով հնարավոր լինի ձևավորել նոր որակի հայ զինծառայող՝ հայրենիքին անսահման նվիրված, ընդհանուր և ռազմական խոր գիտելիքներով ու բարձր կուլտուրայով, ստորաբաժանումներ ղեկավարելու և ինքնուրույն որոշումներ ընդունելու ունակ սպայական կազմով: Հատուկ դեր է հատկացվում սպայական կորպուսին, որի համար ծառայությունը դառնում է կյանքի իմաստ, կենսակերպ, հասարակական և ֆիզիկական զոյության միջոց ու նպատակ: Հայ սպան պետք է լինի ազգային գաղափարախոսության կրողը, տարածողը, մարմնացումը: Միաժամանակ նա պետք է հասարակության կողմից ընկալվի որպես կրթվածության, ազնվության, պատվախնդրության խորհրդանիշ: Կունենա՞նք մենք այդպիսի սպա, դրանից էլ կախված կլինի բանակի, հետևաբար՝ Հայաստանի ապագան: Պետությունն ու հասարակությունը պետք է պայմաններ ստեղծեն, հնարավորություն տան բանակին

¹⁵ «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում սերժանտական կազմը առանձնացվում է զինված ուժերի շարքային կազմից և ներկայացվում է որպես կրտսեր ենթասպայական կազմ (նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 29.12.2011թ. կայացած նիստում և կառավարության օրենսդրական նախաձեռնության սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը):

¹⁶ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 19-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ, 28.01.2011 թ. // www.mil.am

¹⁷ Տե՛ս **Николаев А. И.** На пути совершенствования законодательства в области обороны страны // "Право в Вооруженных Силах", 2003, № 3, էջ 47:

շուտափուլյա ազատվելու բոլոր նրանցից, ովքեր բանակ են մտել ոչ թե սրտի կանչով, հայրենիքին ծառայելու մղումով, այլ տաքուկ անկյուն գտնելու, բարձր վարձատրություն ու թոշակ ստանալու ակնկալիքով:

Հետևաբար, առանձնակի ուշադրություն պետք է դարձնել նաև զինված ուժերում զինվորական ծառայության նյութական խրախուսման հարցերին: Միամտություն և կարճատեսություն է այսօր մտածել, որ շուկայական հարաբերությունների պայմաններում սպայի ծառայության հիմնական խթանիչը միայն ծառայողական խանդավառությունն է ու հայրենասիրական մղումը: Ձինծառայողների վարձատրությունը այսօր այնքան էլ չի համապատասխանում զինվորական-ծառայողական գործառույթների բարդությանը, կարևորությանը, լարվածությանը, ծառայողական պարտականությունների հատուկ բնույթին, ինչը բավականին հարվածում է զինվորական ծառայության վարկանիշին և որակյալ կադրերով զինված ուժերի համալրման գործընթացին: Ձինծառայողի մարտունակությունը սկսվում է ընտանիքից, որի պարագայում, իհարկե, անթույլատրելի է զինծառայողին սոցիալական ծանր բեռի տակ թողնելը: Ռազմական անվտանգության ապահովման համակարգում անթույլատրելի է սոցիալական վիճակից ու հասարակական կյանքում տիրող անարդարությունից դժգոհ, ծառայության նկատմամբ անտարբեր «հայրենիքի պաշտպանի» առկայությունը:

Քաղաքացին պետք է ձգտի զինծառայող դառնալ ոչ թե այն պատճառով, որ չի գտնում իր տեղը քաղաքացիական կյանքում, այլ որովհետև զինվորական ծառայությունը պատվաբեր է և ունի բարձր սոցիալական կարգավիճակ: Միաժամանակ բանակը պետք է հնարավորություն ունենա ընտրելու արժանավորին, լավագույնին, ընդունակին և ոչ թե զինված ուժերի շարքերը համալրի առաջին պատահածով: Հենց այդ իսկ նկատառումներով էլ պետությունը պետք է ձեռնարկի բոլոր միջոցները, որպեսզի զինվորականի մասնագիտությունը համարվի գրավիչ, պատվաբեր և նախընտրելի: Որպես օրինակ կարելի է նշել, որ Ռ. Ռեյգանի ԱՄՆ նախագահ ընտրվելու նախօրեին սպայի մասնագիտությունը ԱՄՆ-ում նախընտրելի մասնագիտությունների ցանկում գտնվում էր ընդամենը հինգերորդ տասնյակում, իսկ նրա կառավարման վերջին տարում դարձավ երկրորդը¹⁸:

Չնայած վերը նշված դժվարություններին ու թերություններին, այնուամենայնիվ ներկայումս Հայաստանի զինված ուժերը կարողանում են աշխարհին ներկայանալ իրենց ճկունությամբ և բարեփոխվելու ունակությամբ: Անցած տարիների ընթացքում իրականացվեց նաև ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը, որի արդյունքների իրականացմանն ուղղված գործողությունները միավորվեցին մեկ միասնական փաստաթղթում՝ ՀՀ զինված ուժերի զարգացման պլանում¹⁹:

¹⁸ Стен Мигачев Ю. И. Конституционные права военнослужащих (сравнительное исследование законодательств РФ, США, Франции и Германии). Дисс. к. ю. н. // ВКИ. М., 1993, էջ 59:

¹⁹ Ավելի մանրամասն տես ՀՀ ՊՆ կողմից ներկայացված «Պաշտպանության ռազմավարական վերանայման 2011-2015 թթ. ծրագիրը» (հանրային օգտագործման համար) // www.mil.am

Այսօր համազգային մոտեցման շնորհիվ հայկական բանակը հարածուն կերպով զարգանում է, և երկրի պաշտպանական ուղորտում հաջողությամբ իրականացվում են մեծածավալ աշխատանքներ, մասնավորապես ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումները համալրվում են նորագույն ռազմական տեխնիկայով և սպառազինությամբ, պաշտպանական գոտիներում և տեղամասերում կատարելագործվում են ամրաշինական կառույցները, տարեցտարի բարելավվում են զինծառայողների ծառայության, կենցաղի, հանգստի և ժամանցի պայմանները, առանձնակի ուշադրություն է դարձվում զինծառայողների, զոհված ազատամարտիկների, հաշմանդամների և նրանց ընտանիքների սոցիալական ու բնակարանային խնդիրների լուծմանը, իրականացվում են աննախադեպ ծավալների կապիտալ և վերանորոգման շինարարական աշխատանքներ: Այս բոլոր միջոցառումների շնորհիվ օրեցօր ավելանում են մեր մարտական կարողությունները, ավելի է մեծանում վստահությունը սեփական ուժերի նկատմամբ, և ՀՀ զինված ուժերը հանդես են գալիս որպես մրցունակ, անընդհատ կատարելագործվող, բարեփոխվող և զարգացման ուղին բռնած կառույց՝ առաջնային կարևորության նպատակ ունենալով Հայաստանի ռազմական անվտանգության երաշխավորումը²⁰:

Ամփոփելով կարելի ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը պետության կարևորագույն ու նպատակային գործառնություններից է և ներառում է սպառնալիքների ժամանակին վերհանումը, գնահատումը, դրանց զարգացման կանխատեսումը, կանխումը, կասեցումը և չեզոքացումը: Հայաստանի պաշտպանական անվտանգությունն ապահովվում է նրա տրամադրության տակ եղած բոլոր ուժերի, միջոցների ու ռեսուրսների համընդհանուր և ամբողջական կիրառմամբ: Հիշյալ անվտանգության ապահովման նպատակով կիրառվում է պետության պաշտպանական համակարգը՝ պետության ամբողջ ներուժի (քաղաքական, տնտեսական, ռազմական և այլն) համադրմամբ ու նպատակաուղղված ղեկավարմամբ: Այդ համադրման հիմնական կարևոր ուղիներից են նաև պետության պաշտպանական ներուժի զարգացումը, պաշտպանական համակարգի ու զինված ուժերի բարեփոխումները, որոնք միտված են երկրի պաշտպանունակության ամրապնդմանը, զինված ուժերի մարտունակության բարձրացմանը և ժողովրդավարության պահանջներին համապատասխանեցմանը: Ձինված ուժերը այսօր և տեսանելի հեռանկարում Հայաստանի ռազմական անվտանգության և ընդհանրապես ազգային անվտանգության հիմնական երաշխավորն են, վերջինիս հիմքը: Հայաստանի զինված ուժերը ազգային ոգու, ազգային գաղափարախոսության կրողն ու համազգային շահերի հիմնական արտահայտիչն են, պետության առանձնահատուկ հպարտությունը, ազգի կենսունակու-

²⁰ Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 20-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ, 28.01.2012 թ. // www.mil.am

թյան խորհրդանիշը, ազգային արժեքների ու սրբությունների հիմնական պահապանը:

ТИГРАН КОЧАРЯН – Вооружённые силы в системе обеспечения военной безопасности Республики Армения. – Обеспечивать военную безопасность – одна из важнейших функций любого государства. Она включает в себя своевременное выявление угроз, оценку и прогноз их развития. В случае необходимости государство должно пресечь и нейтрализовать обнаруженную угрозу. Военная безопасность Армении обеспечивается комбинированным использованием всех сил, средств и ресурсов, имеющихся в её распоряжении. Один из важных способов обеспечить безопасность страны заключается в развитии её оборонительного потенциала, в реформе вооружённых сил и всей оборонной системы. Цель этих мер – укрепить в соответствии с требованиями демократии обороноспособность государства и повысить боевую готовность армии.

TIGRAN KOCHARYAN – The Armed Forces in the Military Security Insurance System of the Republic of Armenia. – It is mentioned in the article that the military security insurance of the Republic of Armenia is one of the key functions of the state and it includes the timely detection of threats, their evaluation, development prediction, prevention, inhibition and neutralization. Defence security of the Republic of Armenia is ensured through the collective and complete usage of all forces, means and resources at its disposal. For the purpose of the mentioned security insurance the state's defence system is put into use in combination with the whole potential (political, economic, military and other fields) and aimed leadership of the state. The basic ways of that combination are also the development of the state's defence potential, reformation of the defence system and the Armed Forces, aimed at the country's defence capability maintenance, AF efficiency enforcement and meeting the democracy requirements.